

РАИСА ГЕОКДЖАЯН
ЭФФЕКТИВНОЕ УПРАВЛЕНИЕ ФИНАНСОВЫМИ РИСКАМИ КАК
ГАРАНТИЯ УСТОЙЧИВОСТИ КОМЕРЧЕСКИХ БАНКОВ РА

Ключевые слова: финансовая устойчивость, оценка кредитоспособности, оценка качества обеспечения, риск ликвидности, рыночный риск.

Цель данной статьи - уточнить особенности эффективного управления финансовыми рисками в коммерческих банках РА.

В статье предлагается модель эффективного управления финансовыми рисками, которая даст возможность для эффективного проведения управленческого анализа и принятий обоснованных решений в условиях риска.

RAISA GEOGJAYAN
EFFECTIVE FINANCIAL RISKS MANAGEMENT AS A GUARANTEE OF
ARMANIAN COMMERCIAL BANKS STABILITY

Key words: financial sustainability, creditworthiness assessment, collateral quality assessment, liquidity risk, market risk.

The present article is devoted to clarifying the peculiarities of effective financial risk management in Armenian commercial banks.

The article presents a model of effective financial risk management which will promote for effective management analysis and risk-based decision-making.

ՍԻԼՎԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հաշվապահական հաշվառում ըստ ճյուղերի,
բակալավորիար, 3-րդ կուրս

ՀԱՐԿԵՐԸ ՈՐՊԵՍ ՀՀ ՊԵՏՔՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԳԼԽԱՎՈՐ ԱՂՔՅՈՒՐ

Հիմնաբառեր. հարկ, հարկային համակարգ, հարկային եկամուտներ, հարկային քաղաքականություն, Հարկային օրենսգիրք

Հոդվածում ներկայացված է Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի ձևավորման և հետագա զարգացման ուղին, հարկային օրենսդրությունում հիմնական հարկատեսակների մասով կատարված բարեփոխումներն ու դրանցով պայմանավորված արդյունքները: Յուրաքանչյուր փուլի կտրվածքով պետական բյուջե ստացված եկամուտների կառուցվածքային վերլուծությունը փաստում է երկրում հարկերից ստացվող միջոցների կարևորության մասին: Այս հանգամանքն էլ պահանջում է հարկային քաղաքականության շարունակական կատարելագործում՝ նպատակ ունենալով ավելացնել բյուջեի մուտքերը՝ ի հաշիվ բարենպաստ գործարար միջավայրի ու տնտեսական աճի ապահովման:

Պատմականորեն հարկերի առաջացումը կապվում է պետության գոյության հետ: Հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր և անհատույց վճար է, որը գանձվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով և ժամկետում: Դրանք եղել ու շարունակում են լինել յուրաքանչյուր պետության տնտեսական հիմքը:

Հարկային համակարգը տվյալ պետության տարածքում գանձվող հարկերի, տուրքերի, մաքսատուրքերի և այլ վճարումների կազմակերպման ձևերի ու եղանակների ամբողջություն է: Հարկերը և հարկային համակարգը կոչված են մի կողմից ապահովելու բյուջեի եկամուտների ժամանակին և լրիվ չափով համալրումը կայուն ֆինանսական միջոցներով, իսկ մյուս կողմից՝ խթանելու պետության տնտեսական ու սոցիալական առաջընթացը: Սակայն պետք է նկատի ունենալ, որ հարկերի ոչ օպտիմալ մակարդակի սահմանումը բացասաբար է անդրադառնում տնտեսավարող սուբյեկտների ձեռնարկատիրական գործունեության զարգացման, ինչպես նաև բնակչության կենսամակարդակի վրա:

Տնտեսության պետական կարգավորման համակարգում առանցքային դերակատարում ունի հարկային քաղաքականությունը, որը պետության կողմից հարկային համակարգի կարգավորման ոլորտում իրականացվող միջոցառումների համալիր է, և, ըստ էության, երկրի հարկային համակարգը ձևավորվում է հարկային քաղաքականության անմիջական ազդեցությամբ:


ՀՀ հարկային համակարգի ձևավորման հիմքերը դրվել են անկախացումից հետո՝ 1990-ական թվականներին: Նորանկախ հանրապետությունում մինչև հարկային օրենսդրության ընդունումը հարկերի հաշվարկը, գանձումը իրականացվում էին նախկին ԽՍՀՄ հարկային օրենսդրությանը՝ առանձին դեպքերում նաև նախագահի հրամանագրերին, ՀՀ Կառավարության և Գերագույն խորհրդի կողմից ընդունված որոշումներին համապատասխան: Ինքնուրույնացման առաջին քայլերը կատարվեցին 1992 թվականից, երբ աստիճանաբար ձևավորվեց օրենսդրական բազան, որի շրջանակներում ընդունվեցին հիմնական հարկատեսակների մասին օրենքները (շահութահարկ, ԱԱՀ, ակցիզային հարկ, եկամտահարկ, գույքահարկ): Բարեփոխումների փուլի սկիզբը դրվեց 1997 թ., երբ ընդունվեց հարկային օրենսդրությունը, որը բաղկացած էր «Հարկերի մասին» օրենքից¹ և առանձին հարկատեսակների մասին օրենքներից, որոնք անընդհատ փոփոխության ենթարկվելով՝ կիրառվեցին մինչ 2018 թ. հունվարի 1-ը, երբ ուժի մեջ մտավ 2016 թ. ՀՀ ԱԺ կողմից ընդունված Հարկային օրենսգիրքը, որով էլ ներկայումս իրականացվում են տվյալ ոլորտի կարգավորումները:

ՀՀ բյուջետային համակարգի մասին օրենքի համաձայն՝ պետական բյուջեի եկամուտների ձևավորման աղբյուրներ են հարկերը և տուրքերը,² պաշտոնական դրամաշնորհները, այլ եկամուտները (տե՛ս գծապատկեր 1):¹

¹ Տե՛ս «Հարկերի մասին» ՀՀ օրենք ՀՕ-107Ն՝ ընդունված 14.04.97 թ., որով սահմանվեցին հարկային համակարգի հիմնարար սկզբունքները, որոնք վերաբերում էին հարկատուների և հարկային մարմինների հարաբերությունների կարգավորմանը, հարկ վճարողների պարտականություններին, նաև օրենսդրությունը խախտելու դեպքում պատասխանատվության կիրառմանը:

² Պետական տուրքը, պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված, օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզի-

Ներկայացված ցուցանիշները փաստում են, որ բյուջետային եկամուտների կազմում առանցքային դեր ունեն հարկային եկամուտները, և այս առումով պետության հիմնական խնդիրն է մշակել և իրականացնել այնպիսի հարկային քաղաքականություն, որը ոչ միայն կապահովի բյուջետային մուտքերի ձևավորման գործընթացը, այլև կնպաստի երկրում տնտեսական գործունեության համար բարենպաստ միջավայրի ստեղծմանը, տնտեսական աճի խթանմանը, ինչը ինքնին բյուջետային լրացուցիչ եկամուտների աղբյուր է:



Գծապատկեր 1. ՀՀ պետբյուջեի եկամուտների կառուցվածքը 2012-2017 թթ.

ՀՀ պետբյուջեի հարկային եկամուտներն են՝ ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ), ակցիզային հարկ, շահութահարկ, եկամտային հարկ, բնապահպանական հարկ, ճանապարհային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ և այլ հարկային եկամուտներ:²

Հարկային մուտքերից պետբյուջեի ձևավորման գործում մշտապես առանցքային նշանակություն են ունեցել ԱԱՀ-ն, եկամտային հարկը, շահութահարկը: Առաջին անգամ ԱԱՀ-ն կիրառվել է 1992 թ.՝ ՀՀ նախագահի հրամանագրի համաձայն՝³ նախնական 28% դրույքաչափով, 1993 թ. այս դրույքաչափը վերանայվեց՝ սահմանվելով 20%: Օրենսդրական առումով կարևոր քայլը «ԱԱՀ-ի մասին» օրենքի ընդունումն էր 1993 թ. հունվարի 30-ին, երբ հարկման բազան ավելացվեց՝ ի հաշիվ հարկման օբյեկտում ներմուծվող ապրանքների իրացման շրջանառությունը ներառելու: 1997 թ. հուլիսի 1-ից գործողության մեջ մտավ արդեն «ԱԱՀ մասին» նոր օրենքը, որի ընդունման առաջին իսկ տարում զգացվեցին էական տեղաշարժեր, և ԱԱՀ-ի գծով պետբյուջե մուտքագրվեց շուրջ 37408.6 մլն դրամ (այն կազմել է ընդհանուր հարկային եկամուտների 36.87%-ը): ԱԱՀ-ից մուտքերի ամենաբարձր արդյունքը գրանցվել է 2014 թ.՝ 440 361.4 մլն դրամ, որը տվյալ տարվա ընդհանուր

կական և իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է:

¹ Գուցանիշները վերցված են <http://www.edrc.am> կայքից:

² Տե՛ս «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենք՝ ընդունված 21.12.2017 թ.:

³ Տե՛ս «Ձեռնարկություններից, կազմակերպություններից և քաղաքացիներից գանձվող հարկերի մասին» հրամանագիր ՆՀ-49 04.01.1992 թ.:

եկամուտների 38,5%-ն է: ¹ Ընդհանուր առմամբ, տարբեր տարիների կտրվածքով, ԱԱՀ-ն ապահովել է ընդհանուր բյուջետային եկամուտների 32-40%-ը:

Եկամտահարկի մասին առաջին օրենքն ընդունվեց 1995 թ., որի համաձայն՝ հարկման օբյեկտ ընդունվեցին ֆիզիկական անձանց դրամական և բնամթերային ձևով ստացված եկամուտները, իսկ հարկվող եկամտի չափը սահմանվեց նվազագույն աշխատավարձի նկատմամբ: 1997 թ. ընդունված «Եկամտահարկի մասին» նոր օրենքով սահմանվեցին հարկման նոր դրույքաչափեր՝ համապատասխանաբար 15%, 25% և 30%, որոնք կիրառվում էին արդեն հարկվող եկամտի նկատմամբ²: Այս դրույքաչափերը վերանայվեցին 2000 թ.³ դառնալով 10% և 20%: Չնայած օրենքում տեղ գտած բազմաթիվ փոփոխություններին ու լրացումներին՝ 1995-2012 թթ. եկամտահարկը կազմում էր բյուջեի եկամուտների ընդամենը 6-10%-ը: Գլխավոր փոփոխությունը տեղի ունեցավ 2013 թ., երբ այս օրենքը փոխարինվեց «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով, և հարկվող եկամտի նկատմամբ սահմանվեցին 24.4%, 26% և 36% դրույքաչափեր: Իսկ նոտարները և ԱԶ-ները եկամտային հարկը հաշվարկում և վճարում էին ամսական 5 հազ. դրամի չափով, որը նրանց համար այս հարկի գծով վերջնական հարկային պարտավորություն էր: Օրենսդրական այս և այլ փոփոխությունների արդյունքում 2013-2016 թթ. եկամտային հարկի տեսակարար կշիռը պետբյուջեի եկամուտներում աճեց՝ կազմելով 23-28%:³


Անկախացումից հետո հարկային համակարգի ներդրման գործում առաջին կարևոր քայլերից մեկը 1992 թ. «Շահութահարկի մասին» օրենքի ընդունումն էր: Այդ օրենքով հարկվող շահույթի մեծությունից կախված՝ կիրառվում էին 12%, 15%, 20% և 25% դրույքաչափեր, որը նույն տարում վերանայվեց՝ դառնալով 12%, 18%, 25% և 30%: Հարկվող շահույթը հաշվարկվում է որպես օրենքով սահմանված համախառն եկամտի և այդ եկամտի ստացման հետ կապված ծախսերի տարբերություն:⁴ Սույն օրենքի շրջանակներում ավելացվեցին գործարարության միջավայրի ձևավորմանն ու օտարերկրյա ներդրումների խրախուսմանն ուղղված արտոնություններ: Արդեն 1997 թ. ընդունվեց շահութահարկի մասին երկրորդ օրենքը, որի շրջանակներում 2000 թ. մտցվեց շահութահարկի միասնական 20% դրույքաչափը: Նոր օրենքով համախառն շահույթը հարկատուի համախառն եկամտի և օրենքով սահմանված նվազեցումների (ծախսեր, կորուստներ և այլ նվազեցումներ) դրական տարբերությունն է: Ընդհանուր առմամբ, 1997 թվականից մինչ օրս շահութահարկն ընդհանուր հարկային եկամուտների կառուցվածքում պահպանում է իր 8-12% բաժինը:

¹ Աղբյուրը՝ <http://www.armstat.am>

² Տե՛ս «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենք, 27.12.97 թ., 5-րդ հոդված:

³ Տե՛ս ՀՀ պետբյուջեի կատարման մասին հաշվետվություններ, 2013-2016 թթ.:

⁴ Տե՛ս «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, 18.01.1992 թ., 3-րդ գլուխ:



Գծապատկեր 2. ՀՀ պեղբոյւջի ընդամենը և հարկային եկամուտները ըստ տարիների

Այս տարիների ընթացքում հարկային եկամուտները անընդհատ աճել են, սակայն, միևնույն ժամանակ, հարկային եկամուտների կառուցվածքում էական փոփոխություններ չեն եղել. արդյունքում ուղղակի և անուղղակի հարկերը շարունակում են պահպանել իրենց համամասնությունները:

Աղյուսակ 1

	2012 թ.	2013 թ.	2014 թ.	2015 թ.	2016 թ.
Հարկեր և տուրքեր	878.4	1,000.9	1064.1	1,067.9	1,079.7
ԱԱՀ	369.7	401.9	440.4	423.9	391.1
Ակցիզային հարկ	49.3	52.1	50.6	49.0	59.7
Շահութահարկ	118.7	124.6	103.6	103.7	127.2
Եկամտահարկ	91.7	5.8	0.2	-0.2	0.0
Եկամտային հարկ	-	251.1	289.2	311.7	332.7
Այլ հարկային եկամուտներ	225.2	138.1	140.8	147.4	135.7
Պետական տուրքեր	23.8	27.3	39.3	32.4	33.3
Պաշտոնական դրամաշնորհներ	18.7	13.3	17.3	29.9	31.4
Այլ եկամուտներ	49.1	57.2	63.4	60.0	70.0
Ընդամենը մուտքեր	946.2	1,071.4	1,144.8	1,167.7	1,171.1

Անուղղակի հարկերը կազմում են հարկերից և տուրքերից ստացվող եկամուտների 45%-ից ավելին, որոնց վերջնական վճարողը սպառողն է, քանի որ դրանց արժեքը ներառվում է ձեռք բերված ապրանքների ու ծառայությունների սակագներում: Այստեղից էլ հետևություն՝ անուղղակի հարկերի աճող ծավալը կարող է լուրջ սոցիալ-տնտեսական խնդիրներ առաջացնել: Մինչդեռ, զարգացած երկրներում պատկերը հակառակն է, և հարկային եկամուտների գերակշիռ մասը կազմում են ուղղակի հարկերը, որոնք անմիջականորեն կապված են տնտեսավարող սուբյեկտների գործունեության արդյունքների հետ:

Վերոհիշյալ օրենսդրական փոփոխությունները հարկային համակարգի անկատարության վկայությունն են: Կայուն ու կանխատեսելի հարկային միջավայրի ձևավորմանն է ուղղված հարկային օրենսգրքի ընդունումը: Նոր օրենսգրքում տեղ են գտել բազում փոփոխություններ՝ կապված նոր հարկատեսակների ընդունման, դրույքաչափերի փոփոխման, հարկման բազայի որոշման, հարկ վճարողների շրջանակների ու սահմանված արտոնությունների, ինչպես նաև հարկերի հավաքագրելիության ապահովման հետ: Մասնավորապես շահութահարկի պարագայում հարկ վճարողների ցանկում ներ-

առվել են ՀՀ-ում հաշվառված նոտարներն ու ԱՁ-ները¹, որոնք նախկինում եկամտային հարկ վճարողներ էին, ինչը կարելի է դիտել որպես ներքին տեղաշարժ: Շահութահարկի կանխավճարները կատարվում են նախորդ հարկային տարվա շահութահարկի գումարի 20%-ի չափով՝ նախկին 18.75%-ի փոխարեն: Եկամտային հարկում գլխավոր փոփոխությունը կապված է հարկման բազայի շեմի ու դրա նկատմամբ կիրառվող տոկոսադրույքի փոփոխման հետ:² Անուղղակի հարկերից ակցիզայինի պարագայում նախատեսվում է աստիճանաբար բարձրացնել հարկի դրույքաչափերը, շարունակական բարձրացումը նախատեսված է մինչև 2021 թ.:³ Դա բացատրվում է եկամտային հարկի դրույքաչափի իջեցման հետևանքով առաջացող հարկային եկամուտների նվազմամբ, ինչպես նաև Եվրոպական և Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներում համանման ապրանքների նկատմամբ սահմանված ավելի բարձր դրույքաչափերով:⁴

Այս տարիների ընթացքում ՀՀ պետությունը փաստացի ստացված եկամուտների կառուցվածքային վերլուծությունը վկայում է հարկերի առանձնահատուկ կարևորության մասին: Դրանով է հիմնականում պայմանավորված այս ոլորտում կատարվող շարունակական փոփոխությունը, որի հիմքում գլխավորապես եղել է հարկերի ֆիսկալ գործառույթի կատարումը, ինչն էլ բացատրվում է պետության առջև ծառացած բազում խնդիրներով:

Վերջերս կատարված գլխավոր փոփոխությունը կամ, կարելի է ասել, ներդրումը հարկաբյուջետային քաղաքականության մեջ ոլորտը կարգավորող միասնական փաստաթղթի՝ Հարկային օրենսգրքի ընդունումն էր, որը առաջադիմական քայլ է այնքանով, որքանով անդրադառնում է հարկային համակարգի և հարկային միջավայրի կայունացմանն ուղղված քայլերին: Սակայն ինչպես նախկին օրենսդրությամբ, այնպես էլ նորով հիմնական շեշտը դրված է հարկային եկամուտների աճի ապահովման վրա: Կատարված փոփոխությունների հաշվին նախատեսվում է հարկերից և տուրքերից հավաքագրել 1.248,5 մլն դրամ, որը նախատեսված ընդհանուր եկամուտների 95.41%-ն է, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշից ավելի է 3.18%-ով:⁵ Եթե խորությամբ դիտարկենք այս փոփոխությունները, ապա պարզ կդառնա՝ այս օրենսգրքի շրջանակներում էլ հարկային եկամուտների աճ հիմնական մասով կշարունակի ապահովվել սպառման հարկման միջոցով:

Հարկային վարչարարության կատարելագործմամբ են մեծապես պայմանավորված բյուջետային եկամուտների ապահովումը և պետության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական բազայի ձևավորումը: Հարկային վարչարարության բարելավման նպատակով առաջարկում ենք հատուկ ուշադրություն դարձնել հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացմանը, միաժամանակ այնպիսի խթանող միջոցների կիրառմանը, որոնք կհանգեցնեն հարկերի կամավոր վճարման սկզբունքի արմատավորմանը: Հարկային պետական քաղաքականության մշակման ու իրականացման շրջանակներում պետք է մշտապես ուշադրության կենտրո-

¹ Տե՛ս ՀՀ հարկային օրենսգիրք՝ ընդունված 04.10.2016, հոդված 103:

² Տե՛ս նույն տեղը, հոդված 150:

³ Տե՛ս նույն տեղը, հոդված 88:

⁴ ՀՀ հարկային օրենսգիրքի հայեցակարգ, Երևան 2015 թ.:

⁵ Տե՛ս ՀՀ 2018 թ. պետական բյուջեի մասին օրենք:

նում պահվեն կայուն և երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման, ներդրումների խրախուսման, նորարարության և տեխնոլոգիական զարգացման խթանման, հասարակության տարբեր սոցիալական խմբերի եկամուտների արդարացի վերաբաշխման նպատակադրումները:

СИЛЬВА ГЕВОРГЯН

НАЛОГИ КАК ОСНОВНОЙ ИСТОЧНИК ДОХОДОВ ГОСУДАРСТВЕННОГО БЮДЖЕТА РА

Ключевые слова: налог, налоговая система, налоговые поступления, налоговая политика, налоговый кодекс.

В статье представлен путь формирования и дальнейшего развития налоговой системы РА, реформы, проведенные в налоговом законодательстве с точки зрения основных видов налогов и ими обусловленные результаты. Структурный анализ доходов государственного бюджета за каждый год указывает на важность средств полученных из налогов в стране. Это обстоятельство также требует постоянного совершенствования налоговой политики с целью увеличения бюджетных поступлений за счет обеспечения благоприятной деловой среды и экономического роста.

SILVA GEVORGYAN

TAXES AS THE MAIN SOURCE OF REVENUE OF THE RA STATE BUDGET

Key words: tax, tax system, tax revenues, tax policy, tax code.

The article presents the process of formation and further development of the tax system of the Republic of Armenia, the reforms carried out in the tax legislation from the point of view of the main types of taxes and its results. The structural analysis of revenues received from the state budget for each year indicates the importance of the funds obtained from taxes in the country. This factor also requires the continuous improvement of tax policy, with the aim of increasing budget revenues through the provision of favorable business environment and economic growth.

ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ապահովագրական գործ,
բակալավրիալ, 3-րդ կուրս

ԳՈՒՅՔԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱՌԱՎԵԼ ԽՈՇՈՐ 2 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ

Հիմնաբառեր. գույքային ապահովագրություն, «Ռուգոսսպրախ Արմենիա» ԱՓԲԸ, «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ, ապահովագրական վճարներ, ապահովագրական հատուցումներ, սակագներ

Հոդվածում ներկայացված և վերլուծված են ՀՀ ապահովագրական շուկայի առավել խոշոր 2 ընկերությունների՝ «Ռուգոսսպրախ Արմենիայի» և «Ինգո Արմենիայի»՝ վերջին 3 տարում հավաքագրած ապահովագրավճարների, տրված հատուցումների և կիրառվող սակագների տվյալները: Ընկերություններն իրականացնում են «Ոչ կյանքի ապահովագրության» գծով գործունեություն: